



ՐՐՈՐԳ ներկայացուցին Տիւ-
ղեան ազգատոհմին է՝ Մահ-
տեսի Սերգսի անդրանիկն՝
Յովնաննէս աղա, որուն
ծննդեան տարին առաջնոց պէս
անստոյգ կը մնայ։ Իւր հօրը
կենդանութեան ատեն նոյնպէս
ոսկերչութեան արուեստին հե-
տամուտ ըլլալով՝ հօրն աջ
բազուկը կ'ըլլայ, եւ իւր եռանդուն աշխուժիւր
Սուլթան Մահմուտ վեհապետին աչքը կը մտնէ։
Սուլթանն այնպէս յաչս կ'առնու զՅովնաննէս՝ որ
1730ին յարքունուստ ոռճիկ կը կապուի անոր։
Իւր հաւատարիմ՝ ծառայութեան ժամանակը
գրեթէ ամէն օր վեհապետէն նորանոր սիրոյ
ցոյցեր կ'ընդունէր։

Շատերուն զարմանալի պիտի երեւայ ան-
շուշտ, եթէ ըսենք՝ թէ այս Յովնաննէսէն սկսեալ
Տիւղեան զարմին մէջ ուրիշ տարր մը խառ-
նուեցաւ. որովհետեւ ամուսնանալու ատեն՝ մինչ-
դեռ իւր անուան եւ պաշտօնին բարձրութեամբը
կրնար երեւելի ազգատոհմէ մ'իրեն յծակից ըն-